# Հայաստանի հարմարվողականության ազգային պլանի (ՀԱՊ) պատրաստում Աշխատաժողով

Կազմակերպիչներ՝
ՀՀ բնապահպանության նախարարություն
և
Կլիմա Արևելք. աջակցություն կլիմայի
փոփոխության մեղմմանը և հարմարվողականությանը Ռուսաստանում և Եվրոպական հարևանության քաղաքականության ծրագրի արևելյան երկրներում

**31 օգոստոսի, 2016թ., ժ. 9:30-17:30** [ենթակա է հաստատման]
**Երևան**

Հանդիպման վայրը՝ Անի Պլազա¦ հյուրանոց, 0001, Երևան, Սայաթ-Նովայի պող., 19 շենք

Կլիմայի փոփոխության նկատմամբ հարմարվողանությունը և կլիմայի փոփոխության ռիսկերի կառավարումը Հայաստանի զարգացման մարտահրավերներից են: Մի շարք ուսումնասիրություններ, այդ թվում ՄԱԿՓՇԿ ներքո կազմված ՀՀ 3-րդ ազգային հաղորդագրությունը (TNC)[1], Համաշխարհային բանկի աշխատանքները և §Տեղական զարգացման բարելավված պլանավորման միջոցով կլիմայի փոփոխության ռիսկերի մեղմումը գյուղական համայնքներում¦ ծրագրի (UNDP-BCPR) շրջանակներում վերջերս հրապարակված հաշվետվությունները[2], փաստում են հարմարվողականության հրատապությունը և կոչ անում ռազմավարական պլանավորման փաստաթղթերում պատշաճ ուշադրություն դարձնելու այդ հիմնախնդրին և ֆինանսական միջոցներ տարամադրելու հարմարվողականությանը և ռիսկերի նվազեցմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը:

Հաշվի առնելով հարմարվողականության ազգային պլան (ՀԱՊ) մշակելու ՀՀ բնապահպանության նախարարության (ԲՆ) հանձնառությունը՝ §Կլիմա Արևելք. փորձագիտական օժանդակություն¦ բաղադրիչի ներքո աջակցություն է տրամադրվել Հայաստանին: Աջակցությունը կայանում էր հետևյալում. վերլուծել խնդրի վերաբերյալ առկա տեղեկատվությունը և երկրում կատարված ուսումնասիրությունների արդյունքները և ներկայացնել առաջարկություններ ՀԱՊ-ի մշակման համար: Գործողության արդյունքում վերլուծվեցին հարմարվողականության առումով երկրի կարողություններն ու կարիքները, ինչպես նաև տրամադրվեցին առաջարկություններ[3] առկա

---

[1] http://www.nature-ic.am/wp-content/uploads/2013/10/3.Armenias-TNC_2015-ARM.pdf
[2] http://www.nature-ic.am/climate-risk-management-publications-and-reports/
[3] Նախքան հանդիպումը մասնակիցները կապահովվեն «Աջակցություն Հայաստանի Հանրապետության էկոհամակարգերի վրա հիմնված հարմարվողականության ազգային հայեցակարգի և

Proudly Incorporating HTSPE
This project is led by HTSPE Ltd Consortium

բացերը լրացնելու ուղղությամբ: Ավելին, վերջնական հաշվետվությունում ներկայացվել են նաև ՀԱՊ-ի միջազգային ուղեցույցին համահունչ ՀԱՊ գործընթացի ճանապարհային քարտեզը, առաջարկվող ՀԱՊ կառուցվածքը և Հայաստանի ՀԱՊ-ի հավանական հիմնական բաղադրիչները:

Այս աշխատաժողովի նպատակն է շարունակել բացահայտել Հայաստանում հարմարվողականության մարտահրավերները և ՀԱՊ-ի մշակման ճանապարհ հարթել՝ և° դեպի ՀԱՊ տանող գործընթացների, և° դրա բովանդակության իսկ առումով:

# Օրակարգի նախագիծ

| | |
|---|---|
| **9:30 – 10:00** | **Գրանցում** |
| **10:00 – 10:20** | **Բացում**<br>• Սիմոն Պապյան, ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ<br>• Ջոն Բարքեր, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության կցորդ/միջազգային օգնության/համագործակցության պատասխանատու՝ գյուղատնտեսության, գյուղերի զարգացման, անտառնտեսության, ջրերի, բնապահպանական և կլիմայի փոփոխության հարցերով |
| | **Հանդիպման նպատակները**<br>• Ժոլտ Լենգյել, թիմի ղեկավար, §Կլիմա Արևելք¦ ծրագիր |
| **Նիստ 1. Փարիզյան համաձայնագիրը և հարմարվողականության դերը նրանում**<br>Վարող՝ Ժոլտ Լենգյել, թիմի ղեկավար, §Կլիմա Արևելք¦ ծրագիր | |
| **10:20 - 10:35** | **Փարիզյան համաձայնագիրը. հիմնական տարրերը և հարմարվողականության դերը.**<br>○ երկարաժամկետ նպատակներ<br>○ ձգտում/ընդլայնման մեխանիզմ<br>○ թափանցիկություն, հաշվետվայնություն և կատարողականություն<br>○ հարմարվողականություն<br>○ ֆինանսներ<br>○ շուկաներ<br>○ գործողություններ մինչև 2020թ.<br>• Ժոլտ Լենգյել, թիմի ղեկավար, §Կլիմա Արևելք¦ ծրագիր |

հարմարվողականությանն ուղղված ազգային գործողությունների պլանի մշակմանը» (CEEF2014-024-AM) վերջնական զեկույցի հայերեն և անգլերեն էլեկտրոնային տարբերակներով:

| | |
|---|---|
| **10:35 - 11:05** | **Փարիզյան համաձայնագրի իրականացման Հայաստանի տեսլականը, Հայաստանի ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունները/ներդրումը (INDC)**<br>• Արամ Գաբրիելյան, ՄԱԿ-ի ԿՓՇԿ-ի ազգային համակարգող |
| **11:05 – 11:25** | Սուրճի ընդմիջում |
| **Նիստ 2. Դեպի Հայաստանի հարմարվողականության ազգային պլան (ՀԱՊ)**<br>Վարող՝ Ասյա Մուրադյան, Կլիմայի փոփոխության և մթնոլորտային օդի պահպանության քաղաքականության բաժնի պետ, Շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության վարչություն, ՀՀ բնապահպանության նախարարություն [ենթակա է հաստատման] | |
| **11:25 – 12:30** | **Հարմարվողականություն. ԵՄ-ում և Հայաստանում ընթացող աշխատանքները և հետագա ծրագրերը՝ 2030թ. և դրանից հետո հեռանկարով**<br>**Հիմնական ոլորտները.:**<br>○ Ջրային ռեսուրսներ<br>○ Գյուղատնտեսություն<br>○ Անտառային տնտեսություն<br>○ Առողջապահություն<br>• Մեղեա Ինաշվիլի, հիմնական փորձագետ, §Կլիմա Արևելք¦ ծրագիր կամ Ժոլտ Լենգյել, թիմի ղեկավար, §Կլիմա Արևելք¦ ծրագիր [ենթակա են հաստատման] [ԵՄ-ի բաղադրիչը]<br>• Դիանա Հարությունյան, Կլիմայի փոփոխության ծրագրերի համակարգող, ՄԱԶԾ Հայաստան [Հարմարվողականություն. Հայաստանի Երրորդ ազգային հաղորդագրության արդյունքները և սպասելիքները Չորրորդ ազգային հաղորդագրությունից] [ենթակա է հաստատման]<br>• Վարդան Մելիքյան, §Տեխնոլոգիաների կարիքների գնահատում¦ (TNA) ծրագրի հարմարվողականության թիմի ղեկավար, [հայաստանյան մասը՝ ներառյալ դրամաշնորհային աջակցության ամփոփ պատկերը]<br>• Ներկայացուցիչներ համապատասխան նախարարություններից և գործակալություններից (ՀՀ բնապահպանության նախարություն, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, Հայանտառ, Հիվանդությունների վերահսկման եվ կանխարգելման ազգային կենտրոն [ոլորտային տեսակետներ], [ենթակա է հաստատման] |
| **12:30 – 13:00** | Հարցուպտասխան և քննարկումներ |
| **13:00 – 14:00** | Ճաշ |
| **14:00 – 14:40** | Հայաստանում ՀԱՊ գործընթացի ճանապարհային քարտեզը<br>• Ջոզեֆ Զայց, միջազգային փորձագետ, §Կլիմա Արևելք¦ ծրագիր |
| **14:40 – 15:20** | Առաջարկ Հայաստանի հարմարվողականության ազգային պլանի կառուցվածքի և հիմնական բաղադրիչների վերաբերյալ |

| | |
|---|---|
| | • Ջոզեֆ Զայց,  միջազգային փորձագետ, §Կլիմա Արևելք¦ ծրագիր |
| **15:20 – 15:40** | **Սուրճի ընդմիջում** |
| **15:40 – 17:10** | **Համակարգված հարցուպատասխան և քննարկումներ** |
| **17:10 – 17:30** | **Եզրակացություններ և աշխատաժողովի փակում**<br>• ՀՀ բնապահպանության նախարարության ներկայացուցիչ [ենթակա է հաստատման], Ժուլտ Լենգյել, թիմի ղեկավար, §Կլիմա Արևելք¦ ծրագիր [ենթակա է հաստատման] |